ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏՔԸ

ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ 2004

«ՀՀ պետական պարտքի 2000-2004թթ. տարեկան և կիսամյակային հաշվետվությունները» հրատարակվել են ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի տեղակալ - գլխավոր գանձապետ Ա. Ջանջուղազյանի և պետական պարտքի կառավարման վարչության պետ Ա. Մարգարյանի ընդհանուր խմբագրությամբ:

Նյութերը կազմել և թարգմանել են ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության աշխատակազմի պետական պարտքի կառավարման վարչության աշխատակիցներ Հ. Կարապետյանը, Ա. Մարությանը, Հ. Ավետիսյանը, Ա. Համբարձումյանը, Ա. Եգանյանը, Շ. Մկրտչյանը, Ս. Խանվելյանը, Լ. Հովականյանը:

Հայաստանի Հանրապետության պետական պարտքը 2004թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմել է 621.1 մլրդ. դրամ կամ 1,278.4 մլն. ԱՄՆ դոլար:

	2001թ.			2002թ.			2003թ.			2004թ.		
	մլրդ դրամ	մլն ԱՄՆ դոլար	ՀՆԱ-ի նկատ-մամբ, %	մլրդ դրամ	մլն ԱՄՆ դոլար	ՀՆԱ-ի նկատ-մամբ, %	մլրդ դրամ	մլն ԱՄՆ դոլար	ՀՆԱ-ի նկատ-մամբ, %	մլրդ դրամ	մլն ԱՄՆ դոլար	ՀՆԱ-ի նկատ-մամբ, %
Պետական պարտք	**545.2**	**970.4**	**46**	**640.6**	**1,095.3**	**46**	**664.4**	**1,173.8**	**42**	**621.1**	**1,278.4**	**36**
այդ թվում՝												
Ներքին պարտք	36.4	64.8	3	40.8	69.8	3	43.1	76.1	3	46.4	95.5	3
Արտաքին պարտք	508.8	905.6	43	599.8	1,025.5	43	621.3	1,097.7	39	574.7	1,182.9	33

Հաշվարկները կատարված են ելնելով համապատասխան ժամանակաշրջանի վերջի դրությամբ ՀՀ Կենտրոնական բանկի կողմից սահմանված ԱՄՆ դոլարի նկատմամբ հայկական դրամի փոխարժեքից:

ՆԵՐՔԻՆ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏՔԸ

Օգտագործված հապավումներ

ՆՊՊ-ներքին պետական պարտք
ՊՊ-պետական պարտատոմսեր
ՊԿՊ-պետական կարճաժամկետ պարտատոմսեր
ՄԺՊ-միջին ժամկետայնության պարտատոմսեր
ԵՊ-երկարաժամկետ պարտատոմսեր

ՀՀ ներքին պետական պարտքը ձևավորվել է 1995թ.-ից՝ պետական կարճաժամկետ պարտատոմսերի թողարկմամբ: Մինչև 2000թ. թողարկվել են միայն կարճաժամկետ պետական պարտատոմսեր, որով պայմանավորված էլ պարտքի ժամկետայնությունը եղել է շատ կարճ, եկամտաբերությունը՝ բարձր: 2000թ. մարտ ամսին առաջին անգամ թողարկվեցին միջին ժամկետայնության մասնակի մարումներով արժեկտրոնային պարտատոմսեր: Այդ պահից սկսած կարճաժամկետ պարտատոմսերը դիտարկվեցին որպես բյուջեի կանխիկ հոսքերի կառավարման գործիք, իսկ դեֆիցիտի ֆինանսավորման խնդիրը այդուհետ պետք է լուծվեր միջին ժամկետ և երկարաժամկետ պարտատոմսերի թողարկմամբ: Ներքին պետական պարտքի կառավարման ռազմավարության շրջանակներում պարտքի ժամկետայնության երկարաձգման և էժանացման նպատակով 2004թ. սեպտեմբերից շուկա ներմուծվեցին երկու նոր տեսակի պարտատոմսեր՝ միջին ժամկետայնության արժեկտրոնային (15 ամսից 5 տարի մարման ժամկետով) և երկարաժամկետ արժեկտրոնային պարտատոմսերը (6-ից 30 տարի մարման ժամկետով):

2000-2004թթ. ընթացքում ներքին պետական պարտքի ծավալները, ժամկետայնությունն և եկամտաբերությունը դրսևորել են հետևյալ միտումները.

Գծապատկեր 1

ՆՊՊ-ի ծավալները և ժամկետայնությունը 2000-2004 թթ.



2000-2004թթ. ժամանակահատվածում ներքին պետական պարտքի կառավարման արդյունավետության մասին են վկայում նաև սպասարկման ծախսերի տարեցտարի նվազումը և ներքին աղբյուրների հաշվին պետական բյուջեի դեֆիցիտի ֆինանսավորման հնարավորության մեծացումը (տես աղ. 1):

Աղյուսակ 1

ՆՊՊ-ի գծով կատարված գործառնությունները 2000-2004թթ.

մլն. դրամ

	Պետական պարտատոմսերի թողարկում	Պարտատոմսերի տեղաբաշխումից հասույթ	Պարտատոմսերի մարում	ՆՊՊ-ի սպասարկում	Դեֆիցիտի ֆինանսավորում
2000 թ.	47,847.2	40,744.4	38,962.4	9,353.9	1,782.0
2001 թ.	45,914.6	41,890.4	35,935.7	6,541.5	5,954.7
2002 թ.	41,883.8	38,202.8	34,255.5	5,955.3	3,947.3
2003 թ.	43,300.0	40,267.0	37,963.7	5,587.3	2,303.3
2004 թ.	43,900.0	44,018.2	38,435.5	5,408.2	5,582.7

Գծապատկեր 2

ՆՊՊ-ի գործիքակազմը 2000-2004 թթ.

մլն. դրամ



2004 թվական

2004թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ներքին պետական պարտքը բնութագրող ցուցանիշներն ունեն հետևյալ տեսքը.

- Ներքին պետական պարտքն անվանական արժեքով կազմել է 46,406.1 մլն. դրամ, որից պետական կարճաժամկետ պարտատոմսերը՝ 9,200.0 մլն. դրամ, միջին ժամկետայնության պարտատոմսերը՝ 34,506.1 մլն. դրամ և երկարաժամկետ պարտատոմսերը՝ 2,700.0 մլն. դրամ:
- Պետական պարտատոմսերի գծով դեֆիցիտի ֆինանսավորումը կազմել է 5,582.7 մլն. դրամ:
- Միջին կշռված եկամտաբերությունը կազմել է 9.01%:
- ՊՊ-ների միջին կշռված ժամկետայնությունը կազմել է 754 օր (ՊԿՊ-եր՝129 օր, ՄԺՊ-եր՝ 727 օր և ԵՊ-եր՝ 2982 օր):

Աղյուսակ 2

2004թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ՆՊՊ-ն բնութագրող ցուցանիշներ

	առ 31.12.2003թ.	առ 31.12.2004թ.
Ներքին պետական պարտքը (մլն.դրամ) որից՝	**43,132.30**	**46,406.1**
կարճաժամկետ պարտատոմսեր (մլն.դրամ)	22,300.00	9,200.0
միջին ժամկետ. պարտատոմսեր (մլն.դրամ)	20,832.30	34,506.1
երկարաժամկետ պարտատոմսեր (մլն.դրամ)	-	2,700.0
ՆՊՊ ժամկետայնությունը (օր) որից՝	**353**	**754**
կարճաժամկետ պարտատոմսերի համար (օր)	182	129
միջին ժամկետ. պարտատոմսերի համար (օր)	537	727
երկարաժամկետ. պարտատոմսերի համար (օր)	-	2982
ՆՊՊ եկամտաբերությունը (%) որից՝	**13.7163**	**9.0067**
կարճաժամկետ պարտատոմսերի համար (%)	11.4296	5.6375
միջին ժամկետ. պարտատոմսերի համար (%)	16.1642	9.8856
երկարաժամկետ պարտատոմսերի համար (%)	-	9.2551
ՆՊՊ/ՀՆԱ (%)	**2.66**	**2.45**

Գծապատկեր 3

2004թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ՆՊՊ-ի կառուցվածքն ըստ թողարկման ժամկետայնության



ԱՌԱՋՆԱՅԻՆ ՇՈՒԿԱ

2004թ. “ՀՀ 2004թ. պետական բյուջեի մասին“ ՀՀ օրենքով պետական պարտատոմսերի հաշվին նախատեսվում էր բյուջեի դեֆիցիտը ֆինանսավորել 5.3 մլրդ. դրամով և վճարել 7.6 մլրդ. դրամ սպասարկման ծախս:

2004թ. ներքին պարտքի կառավարման գործիքակազմը համալրվել է ևս երկու տեսակի պարտատոմսերով՝ միջին ժամկետայնության արժեկտրոնային և երկարաժամկետ արժեկտրոնային պարտատոմսերով:

2004թ. ընթացքում տեղի է ունեցել 42 թողարկում, որից 26-ը՝ ՊԿՊ, 14-ը՝ ՄԺՊ, 2-ը՝ ԵՊ թողարկումներ են: Թողարկվել է 43.9 մլրդ. դրամ ծավալով պարտատոմս: Պահանջարկը կազմել է 109.5 մլրդ. դրամ, հետևաբար, պետական պարտատոմսերի թողարկման ծավալի նկատմամբ պահանջարկը գերազանցել է 2.49 անգամ: Թողարկված ծավալն ամբողջությամբ տեղաբաշխվել է: Պետական պարտատոմսերի թողարկման ծավալի մեջ ՊԿՊ-ները կազմել են 13.2 մլրդ. դրամ (30.1%), ՄԺՊ-ները՝ 28.0 մլրդ. դրամ (63.8 %), իսկ ԵՊ-ները՝ 2.7 մլրդ. դրամ (6.1%): Տարվա ընթացքում կատարված ՊԿՊ-երի միջին թողարկման ծավալը կազմել է մոտ 528.0 մլն. դրամ, ՄԺՊ-երի՝ 1,866.7 մլն. դրամ, ԵՊ-երի՝ 1,350.0 մլն. դրամ: 2004թ. ընթացքում ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարությունը իրականացրել է պարտատոմսերի ամենամսյա հետգնումներ՝ 2,598.2 մլն. դրամ ընդհանուր ծավալով: Հիմնականում հետ են գնվել միջին ժամկետայնությամբ մասնակի մարումներով արժեկտրոնային պարտատոմսեր, որոնց եկամտաբերությունը զգալիորեն բարձր էր շրջանառող պարտքի միջին կշռված եկամտաբերությունից: Հետգնումների նպատակն էր բարելավել ներքին պետական պարտքի որակը՝ ժամկետայնության և եկամտաբերության առումով:

2004թ. ընթացքում կատարված տեղաբաշխումների միջին կշռված ժամկետայնությունը կազմել է 863 օր, տեղաբաշխման եկամտաբերությունները տատանվել են 2.9999%-10.4800% սահմաններում, իսկ տեղաբաշխման միջին կշռված եկամտաբերությունը կազմել է 7.3216% (տես աղ. 3):

Աղյուսակ 3

2004թ.ընթացքում ՊՊ-երի եկամտաբերության և ժամկետայնության ցուցանիշներն ըստ ամիսների

	Նվազագույն եկամտ. (%)	Առավելագույն եկամտ. (%)	Միջին կշռված եկամտ. (%)	Տեղ. միջին կշռված ժամկետ. (օր)
Հունվար	7.1000	7.6200	7.5335	364
Փետրվար	5.4999	10.4800	8.4249	646
Մարտ	5.4980	9.9900	8.4150	710
Ապրիլ	5.5000	9.8000	8.5614	815
Մայիս	5.5700	9.4899	8.7714	893
Հունիս	4.7800	8.8888	7.7649	799
Հուլիս	4.4000	7.2600	6.5811	638
Օգոստոս	4.7000	7.8900	6.7933	755
Սեպտեմբեր	4.7000	9.8000	7.4588	1425
Հոկտեմբեր	3.3400	7.3400	5.9146	723
Նոյեմբեր	3.7100	7.2800	5.7938	590
Դեկտեմբեր	2.9999	9.5000	6.7611	1855

	Նվազագույն եկամտ. (%)	Առավելագույն եկամտ. (%)	Միջին կշռված եկամտ. (%)	Տեղ. միջին կշռված ժամկետ. (օր)
Ընդամենը	2.9999	10.4800	7.3216	863

Աղյուսակ 4

2004թ. ընթացքում ՊՊ-երի հետ կատարված գործառնություններն ըստ եռամսյակների

(մլն. դրամ)

Եռամսյակներ	Թողարկում	Տեղաբաշխում	Հասույթ	Մարում	Սպասարկում	Դեֆ.ֆին.
I	7,900.0	7,900.0	7,829.3	8,176.8	1,076.1	-347.5
II	11,500.0	10,500.0	11,520.2	8,171.8	1,210.6	3,348.4
III	13,100.0	13,100.0	13,099.9	10,703.7	1,842.4	2,396.2
IV	11,400.0	11,400.0	11,568.8	11,383.2	1,279.0	185.6
Ընդամենը	43,900.0	43,900.0	44,018.2	38,435.5	5,408.2	5,582.7

2004թ. պարտատոմսերի տեղաբաշխումից հասույթը գերազանցել է պետական պարտատոմսերի տեղաբաշխման անվանական ծավալը (տես աղ. 4): Պատճառն այն է, որ տարվա ընթացքում թողարկված բոլոր ՄԺՊ-երը և ԵՊ-երը տեղաբաշխվել են հավելավճարով (պարտատոմսերը իրացվել են անվանական արժեքից բարձր գնով):

2004թ. ընթացքում պետական պարտատոմսերի հաշվին պետբյուջեի դեֆիցիտն օրենքով նախատեսվածից ավել է ֆինանսավորվել 282.7 մլն. դրամով, իսկ սպասարկման ծախսերը տնտեսվել են 2,191.8 մլն դրամով: Պատճառը եկամտաբերության անկումն ու մարման բեռի ցրվածության մեծացումն է:

Գծապատկեր 4

ՆՊՊ-ի եկամտաբերության և ժամկետայնության շարժը 2004թ.



2004թ. ընթացքում ներքին պետական պարտքի կառավարման բնագավառում հաջողվել է լուծել միաժամանակ երկու խնդիր՝ պարտքի եկամտաբերության նվազմանը զուգընթաց մեծացնել թողարկման ժամկետայնությունը (տես գծ. 4): 2004թ. առաջին անգամ թողարկվել են երկարաժամկետ արժեկտրոնային պարտատոմսեր: Վերջինիս, ինչպես նաև միջին ժամկետայնության պարտատոմսերի տեսակարար կշռի ավելացման արդյունքում զգալի մեծացել է ներքին պետական պարտքի ժամկետայնությունը, մարումների բաշխվածությունը կազմել է տասը տարի՝ մինչև 2014թ: Տարվա ընթացքում նկատելի է միջին ժամկետայնությամբ արժեկտրոնային պարտատոմսերի նկատմամբ պահանջարկի շարունակական աճ, որը կարելի է բացատրել ՊԿՊ-երի համեմատ վերջիններիս մի փոքր ավելի բարձր եկամտաբերությամբ, այդ արժեթղթերի նկատմամբ երկրորդային շուկայում առկա պահանջարկով, ինչպես նաև տարվա ընթացքում բանկային համակարգում գրեթե միշտ առկա բարձր ավելցուկային իրացվելիությամբ ու թողարկողի կողմից պարբերաբար իրականացվող հետգնումներով (տես գծ. 5):

Գծապատկեր 5

Ավելցուկային իրացվելիություն և պահանջարկ/առաջարկ կապը



Ինչ վերաբերվում է ՊՊ-երի նկատմամբ ձևավորված պահանջարկին, ապա դրա 89.7 %-ը (98.2 մլրդ. դրամ) կազմում է գործակալների և դիլերների սեփական միջոցների, իսկ 10.1%-ը (11.0 մլրդ. դրամ)՝ իրենց ներդրողների հաշվին: 2004թ. պարտատոմսերի առաջնային տեղաբաշխման ժամանակ մասնակիցների կողմից ձեռք բերված պարտատոմսերի 71.4%-ը բաժին է ընկնում վեց գործակալներին, 28.1%-ը՝ 13 դիլերներին, 0.5%-ը՝ Գանձապետական պահառուին: Պետական պարտատոմսերի շուկայում ներդրողների կառուցվածքում տարվա վերջի դրությամբ գերակշռում են ՀՀ բանկերը:

Գծապատկեր 6

ՊՊ-երի ներդրողների կառուցվածքը (2004թ. դեկտեմբերի 24-ի դրությամբ)



ԵՐԿՐՈՐԴԱՅԻՆ ՇՈՒԿԱ

2004թ. ընթացքում երկրորդային շուկայում կատարված գործարքներն ունեն հետևյալ տեսքը՝

- Կատարվել է 734 գործարք, որից 697-ը եղել են միջբանկային, իսկ 37-ը ԿԲ-ի գործարքներ
- Գործարքների ընդհանուր ծավալը կազմել է 45,716.1 մլն. դրամ, որից
  - ✓ Առևտրային բանկերի կողմից 39,742.9 մլն. դրամ
  - ✓ ԿԲ-ի կողմից 5,973.2 մլն. դրամ
- Ընդամենը ՊԿՊ՝ 18,759.0 մլն. դրամ
- Ընդամենը ՄԺՊ՝ 25,011.0 մլն. դրամ
- Ընդամենը ԵՊ՝ 1,946.1 մլն. դրամ
- Միջին կշռված եկամտաբերությունը՝ 6.6388%
- Միջին կշռված ժամկետայնությունը՝ 992օր
- Միջին օրական ծավալը՝ 180.7 մլն. դրամ
- Գործարքների միջին օրական քանակը՝ 3:

Ըստ ժամկետայնության գործարքներն ունեն հետևյալ տեսքը (տես գծ. 7).

Գծապատկեր 7

2004թ.երկրորդային շուկայում կատարված գործառնություններն ըստ ժամկետայնության



	1-91 օր	92-182օր	183-364 օր	1-3 տարվա	3-4 տարվա	4-5 տարվա	6 և ավելի տարվա
գործ.ծավալ (մլվան դրամ)	8,274.4	4,183.5	7,620.2	2,527.9	6,600.4	14,563.3	1,946.1
եկամտ. (%)	3.95	5.60	6.22	8.41	7.16	7.81	9.15

Ի տարբերություն նախորդ տարիների, 2004թ. երկրորդային շուկայում առավել շատ շրջանառել են ՄԺՊ-ները՝ 55% (նախորդ տարվա 47%-ի համեմատ):

Գծապատկեր 8

ՊԿՊ-երի, ՄԺՊ-երի և ԵՊ-երի տեսակարար կշիռը գործարքների ծավալում



Աղյուսակ 5

Պետական պարտատոմսերի երկրորդային շուկայի ծավալներն ու եկամտաբերությունները 2000-2004թթ.

	Գործարքների ընդհանուր ծավալ(մլն. դրամ)	միջին եկամտաբերություն	կատարված գործարքների քանակը	միջին օրական ծավալը(մլն. դրամ)	միջին օրական քանակը
2000թ.	73,047.1	24,89%	2162	287.6	9
2001թ.	53,906.6	19,78%	1489	211.4	6
2002թ.	43,288.7	15,07%	1013	171.1	4
2003թ.	48,881.6	12,71%	1229	194.8	5
2004թ.	45,716.1	6.64%	734	179.9	3

ԳԱՆՁԱՊԵՏԱԿԱՆ ՊԱՀԱՌՈՒ

Հայաստանի Հանրապետությունում Գանձապետական պահառուն գործունեություն է ծավալում 1999 թվականից: Այս տարիների ընթացքում համակարգը մշտապես զարգացել ու կատարելագործվել է և միշտ սերտորեն համագործակցել է պետական արժեթղթերում ներդրում կատարել ցանկացող քաղաքացիների ու կազմակերպությունների հետ: Համակարգն իր հուսալիության, կայուն գործելակերպի և վստահության ամրապնդման շնորհիվ ժամանակի ընթացքում ձեռք է բերել բազմաթիվ մշտական հաճախորդներ, որոնք սկզբից ի վեր մասնակցել են համակարգի ձևավորման գործընթացին և ներկայումս էլ ակտիվորեն շարունակում են համագործակցել Գանձապետական պահառուի հետ՝ օգտվելով համակարգի ընձեռած բացառիկ արտոնություններից:

Գանձապետական պահառուն 2004թ. ընթացքում շարունակել է աջակցել այն անձանց, որոնք ցանկանում են հուսալի և ապահով ներդնել իրենց խնայողությունները:

2004թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Գանձապետական պահառուի կողմից իրականացված գործառնություններն ունեցել են հետևյալ տեսքը.

- մասնակցել է կազմակերպված ՊԿՊ–երի բոլոր 25 թողարկումներին,
- ներդրման ծավալը կազմել է 220.7 մլն. դրամ,
- միջինը մեկ աճուրդի ժամանակ ներդրվել է 8.9 մլն. դրամ,
- միջինը մեկ աճուրդում մեկ ներդրողի ներդրման ծավալը կազմել է 1.2 մլն. դրամ,
- միջինը մեկ աճուրդին մասնակցել է 7 ներդրող,
- մարվել է 798.0 մլն. դրամի պարտատոմս,
- դիլեր բանկեր է փոխանցվել 21,3 մլն. դրամի պարտատոմս,
- ընդամենը շրջանառության մեջ է եղել 194.2 մլն. դրամի պարտատոմս,
- բացված դեպո հաշիվների քանակը կազմել է 673,
- գործող դեպո հաշիվների քանակը կազմել է 86,
- շրջանառության մեջ եղած պարտատոմսերի միջին կշռված ժամկետայնությունը կազմել է 87 օր,
- միջինը մեկ ներդրողի կողմից ներդրման ծավալը կազմել է 2.1 մլն. դրամ,
- միջինը մեկ ներդրողը մասնակցել է 1.7 թողարկման:

Ներդրման ծավալը 2003թ-ի նկատմամբ նվազել է 74.7%-ով, իսկ ԳՊ-ով ձեռք բերված և շրջանառության մեջ գտնվող պարտատոմսերի ծավալը նախորդ տարվա նկատմամբ նվազել է 75.5%-ով (տես գծ. 9):

Գծապատկեր 9

Շրջանառության մեջ գտնվող պարտատոմսերի ծավալը 2004թ

մլն. դրամ



Չնայած նրան, որ 2004թ. ընթացքում Գանձապետական պահառուն մասնակցել է կազմակերպված պետական կարճաժամկետ պարտատոմսերի բոլոր 25 թողարկումներին, այնուամենայնիվ ներդրման ծավալը նվազել է, որն էլ պատճառ է հանդիսացել շրջանառության մեջ գտնվող պարտատոմսերի ծավալի կրճատման:

Աղյուսակ 6

Գանձապետական պահառուի կատարած գործառնությունները (ըստ եռամսյակների)

2004թ.	Տեղաբաշխում (մլն. դրամ)	Մարում (մլն. դրամ)	Միջին եկամտաբերություն
I եռ.	113.6	224.0	6.6%
II եռ.	51.1	211.9	5.6%
III եռ.	35.2	185.9	5.0%
IV եռ.	20.8	176.3	3.9%
Ընդամենը	**220.7**	**798.0**	

2004թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ դեպո հաշիվների քանակը կազմել է 673, որը 11-ով կամ 1.7 %-ով ավելին է եղել նախորդ տարվա նույն ցուցանիշից (տես գծ. 10):

Գծապատկեր 10

Դեպո հաշիվների դինամիկան



Դեպո հաշիվների քանակի մեկ տարվա ընթացքում ընդամենը 11-ով ավելացումը և գործող դեպո հաշիվների քանակի նվազումը պայմանավորված է պետական կարճաժամկետ

պարտատոմսերի տոկոսադրույքների կտրուկ նվազմամբ և միևնույն ժամանակ առևտրային բանկերում ավանդների տոկոսադրույքների բարձր մակարդակի պահպանմամբ: Համեմատության համար նշենք, որ 2003թ. պետական կարճաժամկետ պարտատոմսերի թողարկումների միջին կշռված եկամտաբերությունների միջինը կազմել է 11.61%, իսկ 2004թ. այն կազմել է ընդամենը 5.15%:

Գծապատկեր 11

Ներդրումներն ըստ ժամկետայնության



	1-13 շաբաթ	40-52 շաբաթ	Ընդամենը
Թողարկման ծավալ 10 % (մլն.դրամ)	400.0	920.0	1,320.0
Տեղաբաշխում (մլն.դրամ)	20.7	200.0	220.7
Տեղաբաշխված կշիռը (%)	5.2	21.7	16.7

2004թ. թողարկված պետական կարճաժամկետ պարտատոմսերից ներդրողները գերադասել են առավել երկարաժամկետ՝ 40-52 շաբաթ մարման ժամկետ ունեցող պարտատոմսերը, որոնց տեղաբաշխման կշիռը ամենամեծն է եղել և կազմել է 21.7% (տես գծ. 11): Սակայն, ինչպես երևում է գծապատկերից, ներդրողների կողմից ձեռք է բերվել Գանձապետական պահառուի կողմից առաջարկված ծավալի միայն 16.7%-ը: Սա փաստում է այն մասին, որ Գանձապետական պահառու համակարգը ունի մեծ հնարավորություն պետական պարտատոմսերի շուկա ներգրավելու նոր ներդրողների:

ԱՐՏԱՔԻՆ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏՔ

1999 թվականի դեկտեմբերի 31-ից մինչև 2004 թվականի դեկտեմբերի 31-ը ՀՀ արտաքին պետական պարտքը աճել է 312.1 մլն ԱՄՆ դոլարով (շուրջ 36%-ով)՝ 870.8 մլն ԱՄՆ դոլարից հասնելով 1,182.9 մլն ԱՄՆ դոլարի:

Չնայած ՀՀ արտաքին պետական պարտքի բացարձակ մեծության աճին, նշված տարիների ընթացքում որակական առումով արձանագրվել է պարտքը բնութագրող ցուցանիշների զգալի բարելավում:

Երկրի արտաքին պարտավորվածության մակարդակի գնահատման տեսանկյունից պարտքի բացարձակ մեծությունից առավել կարևոր է այդ պարտքը սպասարկելու ունակությունը, որի համար անհրաժեշտ է, որ ՀՆԱ-ի, ապրանքների և ծառայությունների արտահանման, բյուջեի եկամուտների աճի տեմպերը որոշակիորեն գերազանցեն երկրի արտաքին պարտքի, դրա սպասարկման աճի տեմպերին, ինչը հիմնականում տեղի է ունեցել 1999-2004թթ. ընթացքում Հայաստանի Հանրապետությունում[1]:

Նշված տարիների ընթացքում արտաքին պետական պարտքի աճի տեմպերի նկատմամբ ՀՆԱ-ի աճի տեմպերի գերազանցման արդյունքում զգալիորեն նվազել է արտաքին պետական պարտք ՀՆԱ հարաբերակցությունը (տես գծ.12):

Գծապատկեր 12

ՀՀ արտաքին պետական պարտքի և արտաքին պետական պարտք / ՀՆԱ ցուցանիշի դինամիկան



ՀՀ արտաքին պետական պարտքի ձևավորման ոլորտում իրականացված քաղաքականության՝ ոչ արտոնյալ վարկերի վաղաժամկետ մարելու, առևտրային պայմաններով նոր վարկային պայմանագրեր չստորագրելու շնորհիվ 1999-2004թթ. ընթացքում ոչ արտոնյալ պայմաններով տրամադրված վարկերի գծով մարումները զգալիորեն գերազանցել են ստացումներին, որի արդյունքում ՀՀ արտաքին պետական պարտքի կառուցվածքում արձանագրվել է արտոնյալ վարկերի տեսակարար կշռի աճ:

---

[1] ՀՀ արտաքին պետական պարտքի բեռը բնութագրող որոշ ցուցանիշների գծով առկա սահմանափակումները տարբեր պարտավորվածության մակարդակ ունեցող երկրների համար և Հայաստանի փաստացի տվյալները տես հավելված 1-ում

Նշված տարիների ընթացքում.

- ստացվել է արտաքին վարկային միջոցներ.

Աղյուսակ7

մլն. ԱՄՆ դոլար

Կառավարության պարտավորությունների գծով	**526.3**
այդ թվում	
Կառուցվածքային բարեփոխումների վարկերի և Աղքատության կրճատման աջակցության վարկի գծով (ներգրավվել է անմիջականորեն պետական բյուջեի դեֆիցիտի ֆինանսավորման համար)	**162.1**
որից	
1999	23.4
2000	25.2
2001	14.4
2002	35.1
2003	42.8
2004	21.2
ոչ արտոնյալ պայմաններով տրամադրված վարկային ծրագրերի գծով	24.8
Կենտրոնական Բանկի պարտավորությունների գծով	**124.2**
այդ թվում	
ոչ արտոնյալ պայմաններով տրամադրված վարկային ծրագրերի գծով	-
Կառավարության և Կենտրոնական Բանկի կողմից տրամադրված արտաքին երաշխիքների գծով	**14.6**
այդ թվում	
ոչ արտոնյալ պայմաններով տրամադրված վարկային ծրագրերի գծով	14.6
Ընդամենը	**665.1**
այդ թվում	
ոչ արտոնյալ պայմաններով տրամադրված վարկային ծրագրերի գծով	**39.4**

- ՀՀ պետական արտաքին վարկային պարտավորությունների գծով մարվել է.

մլն. ԱՄՆ դոլար

Կառավարության պարտավորությունների գծով	**210.1**
այդ թվում	
ոչ արտոնյալ պայմաններով տրամադրված վարկային ծրագրերի գծով	189.1
որից	
գույք պարտքի դիմաց բանաձևի շրջանակներում ռուսական վարկերի մարում	93.7
Եվրամիության կողմից տրամադրված վարկի վաղաժամկետ մարում (վաղաժամկետ մարում՝ ընդհանուր առմամբ 26 մլն եվրո, անելու համար Եվրամիությունը տրամադրել է դրամաշնորհ՝ ընդհանուր առմամբ 20.5 մլն եվրո)	26.4
Կենտրոնական Բանկի պարտավորությունների գծով	**120.2**
այդ թվում	
ոչ արտոնյալ պայմաններով տրամադրված վարկային ծրագրերի գծով	64.3
Կառավարության և Կենտրոնական Բանկի կողմից տրամադրված արտաքին	**43.4**

երաշխիքների գծով	
այդ թվում	
ոչ արտոնյալ պայմաններով տրամադրված վարկային ծրագրերի գծով	43.4
Ընդամենը	**373.7**
այդ թվում	
ոչ արտոնյալ պայմաններով տրամադրված վարկային ծրագրերի գծով	**296.8**

2002թ. ի վեր ՀՀ արտաքին պետական պարտքի սպասարկման գծով ժամկետանց վճարումներ չեն եղել :

ՀՀ արտաքին պետական պարտքի մեջ արտոնյալ վարկերը 2004թ. կազմել են 97% (տես գծ.13):

Գծապատկեր 13

ՀՀ արտաքին պետական պարտքի արտոնյալության դինամիկան



2004 թվական

2004թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ կառավարության և նրա կողմից տրամադրված երաշխիքների գծով արտաքին պարտավորությունները կազմել են 965.3 մլն ԱՄՆ դոլար (կամ ընդհանուր արտաքին պետական պարտքի 81.6%), իսկ ՀՀ Կենտրոնական բանկի արտաքին պարտավորությունները՝ 217.6 մլն ԱՄՆ դոլար (կամ ընդհանուր արտաքին պետական պարտքի 18.4%):

2003թ. դեկտեմբերի 31-ի համեմատությամբ հանրապետության արտաքին պետական պարտքի ծավալը աճել է 7.8%-ով կամ 85.3 մլն ԱՄՆ դոլարով, որը պայմանավորված է եղել.

- 2004թ. ընթացքում իրականացված գործառնություններով՝ 35.3 մլն ԱՄՆ դոլար,

- ԱՄՆ դոլարի նկատմամբ ՀՀ արտաքին պետական պարտքի զամբյուղը ներկայացնող հիմնական արտարժույթների փոխարժեքների փոփոխությամբ[2]՝ 50 մլն ԱՄՆ դոլար:

2004թ. ընթացքում արտաքին պետական պարտքի գծով կատարվել են հետևյալ գործառնությունները.

Աղյուսակ 8

ՀՀ արտաքին պետական պարտքի սպասարկումը և արտաքին վարկային միջոցների ստացումները 2004թ. ընթացքում

	Խտացում	*Սպասարկում*		
		ընդամենը	*այդ թվում*	
			մարում	*տոկոսավճար*
Ընդամենը	**121.62**	**95.82**	**86.10**	**9.72**
այդ թվում՝				
1. ՀՀ կառավարության և նրա կողմից տրամադրված արտաքին երաշխիքների գծով արտաքին պարտավորություններ	**93.32**	**59.83**	**51.38**	**8.45**
որից՝				
Բազմակողմանի վարկատուներ	*82.86*	*24.62*	*17.66*	*6.96*
Համաշխարհային Բանկ	78.14	7.23	1.33	5.91
որից՝				
Միջազգային Զարգացման Գործակալություն	*78.14*	*6.32*	*0.73*	*5.59*
Գյուղ. Զարգացման Միջազգային Հիմնադրամ	4.62	0.28	-	0.28
Վերակառուցման և Զարգացման Եվրոպական Բանկ	0.10	8.59	7.94	0.65
Եվրամիության	-	8.52	8.39	0.13
Երկկողմանի վարկատուներ	*10.46*	*35.21*	*33.72*	*1.49*
Ռուսաստանի Դաշնություն	-	31.01	31.01	-
ԱՄՆ	-	3.61	2.71	0.90
Գերմանիա (KfW)	10.46	0.55	-	0.55
Ֆրանսիա	-	0.03	-	0.03
Ճապոնիա	-	0.01	-	0.01
2. ՀՀ Կենտրոնական բանկի արտաքին պարտավորություններ	**28.30**	**35.99**	**34.72**	**1.27**
որից՝				
Բազմակողմանի վարկատուներ	*28.30*	*35.99*	*34.72*	*1.27*
Արժույթի Միջազգային Հիմնադրամ	28.30	35.99	34.72	1.27

[2] 31.12.2003թ. դրությամբ 1SDR=1.48597 USD, 1EUR =1.2630 USD
31.12.2004թ. դրությամբ 1SDR=1.55301USD, 1EUR =1.3621 USD

2004թ. հատկանաշական էր այն առումով, որ լրացավ Զարգացման Միջազգային Գործակալության կողմից տրամադրված առաջին վարկի արտոնյալ ժամանակաշրջանը և ըստ վարկային համաձայնագրի ժամանակացույցի կատարվեց մարման գծով առաջին վճարումը, որով և սկիզբ դրվեց վերջինիս կողմից տրամադրված վարկերի մարումներին:

Հաշվի առնելով 1999-ից հետո ՀՀ կողմից ներգրավված վարկերի արժութային կազմը, ՀՀ պետական պարտքի կառուցվածքը ըստ տրամադրման արժույթի զգալի փոփոխություններ է կրել, և 2004թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ունի հետևյալ տեսքը (տես գծ.14).

Գծապատկեր 14

ՀՀ արտաքին պետական պարտքի կառուցվածքն ըստ տրամադրման արժույթի 2004թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ



ԱՄՆ դոլարի նկատմամբ SDR-ի և EUR-ի փոխարժեքների փոփոխությունը բացասական ազդեցություն է ունեցել հիմնականում տոկոսավճարների գծով վճարումների աճի առումով, իսկ ինչ վերաբերվում է հիմնական գումարների մարումներին, ապա, հաշվի առնելով, որ ՀՀ կառավարության պարտավորությունների գծով կատարվել է SDR-ով տրամադրված միայն մեկ վարկի մասնակի մարում, իսկ Եվրամիության կողմից տրամադրված վարկի վաղաժամկետ մարման (7 մլն Եվրո) հետ զուգընթաց ստացվել է դրամաշնորհ (5.5 մլն Եվրո), փոխարժեքների փոփոխությունը էական ազդեցություն չեն ունեցել:

2004թ. ընթացքում ստորագրվել են 8 նոր վարկային համաձայնագրեր՝ 1 վարկային համաձայնագիր (**15.5 մլն EUR** ընդհանուր գումարով) Գերմանիայի հետ և 7 վարկային համաձայնագրեր (**70.4 մլն SDR** ընդհանուր գումարով) ՁՄԳ-ի հետ, ինչպես նաև ՁՄԳ-ի կողմից տրամադրված մեկ վարկային համաձայնագրում կատարվել է փոփոխություն՝ համաձայն որի վարկի գումարը ավելացվել է (**1.2 մլն SDR** ընդհանուր գումարով)[3]:

1999-2004թթ. ընթացքում ՀՀ վարկատուների կառուցվածքը ևս էականորեն փոխվել է: Առևտրային պայմաններով Եվրամիության, Զարգացման և Վերակառուցման Եվրոպական

[3] 1999-2004թթ. Հայաստանի Հանրապետության գործող արտաքին վարկային պայմանագրերի վերաբերյալ տեղեկատվությունը տես հավելված 2-ում

Բանկի, Ռուսաստանի Դաշնության, Թուրքմենստանի կողմից տրամադրված վարկերի մարումների և նրանց կողմից նոր վարկեր չստանալու արդյունքում, վերջիններս մասնաբաժինը ՀՀ արտաքին պետական պարտքում զրոյացվել է կամ նվազել է: Միևնույն ժամանակ աճման միտում է ունեցել արտոնյալ պայմաններով Զարգացման Միջազգային Գործակալության, Գյուղատնտեսության Զարգացման Միջազգային Հիմնադրամի, Գերմանիայի կողմից ստացված վարկերի մասնաբաժինը ՀՀ արտաքին պետական պարտքում (տես գծ. 15):

Գծապատկեր 15

ՀՀ արտաքին պետական պարտքի կառուցվածքն ըստ վարկատուների 2004թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ